ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

Թեմա՝

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՈՐՊԵՍ ԳԼՈԲԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ: ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Առարկա՝ Հասարակագիտություն

ՈՒսուցչուհի՝ Խաչատրյան Լուսինե

Ղեկավար՝ Հայրապետյան Արմեն

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **3**

Ինչ է կոռուպցիան **4**

Կոռուպցիայի վնասները **5**

Կոռուպցիայի պատճառներն ու հետևանքները **6**

Կոռուպցիայի դրսևորումներն ու մակարդակները **9**

Հակակոռուպցիոն քաղաքականությունը ՀՀ-ում **15**

Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը 16

Հակակոռուպցիոն կոմիտե 16

Հակակոռուպցիոն դատարաններ 17

Կոռուպցիայի կանխարգելումը 17

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում 18

Հասարակության հակակոռուպցիոն կրթությունը և իրազեկումը 18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ **20**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ **22**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիան ձևավորվել է մարդկության կազմավորման ժամանակներից: Նրանով այսօր էլ շարունակում է տառապել համայն աշխարհը: Դա գլոբալ խնդիր է, որը շրջապատին բերում է բազմաթիվ այլ իրավախախտումներ: Այն ախտ և չարիք է, որը քայքայում է պետությունը, խանգարում նրա նորմալ զարգացումը:

Կոռուպցիան միշտ եղել է մեր համատեղ գոծունեության մի մաս, մինչդեռ բոլորը բացասական վերաբերմունք ունեն կոռուպցիայի հանդեպ, որովհետև այն քայքայում է հասարակության ոչ միայն տնտեսական,այլ նաև բարոյական հիմքերը: Շատ ժամանակ մենք չենք տեսնում կոռուպցիան կամ էլ ցանկանում ենք պարզապես անտեսել այն: Կոռուպցիան տեսնելու պրոբլեմի մի մասը կայանում է նրանում, որ այն գործում է գաղտնիության քողի ներքո: Արիստոտելը մատնանշում էր պրոբլեմի մեկ այլ կողմ, երբ ասում էր. «Ավելի սովորական է դարձել այն, որ մեծամասնությունն է ամենաքիչը մտահոգված դրանով»:

Կոռուպցիայի և չարաշահումների դեմ պայքարի գլխավոր պայմաններից է պատասխանատվությունը և քաղաքացիական վերահսկումը: Ուսումնասիրելով կոռուպցիայի դեմ պայքարում հաջողություն արձանագրած երկրների փորձը, կարելի է գալ այն համոզման, որ հակակոռուպցիոն պայքարի ռազմավարության մշակման ժամանակ առաջնային անհրաժեշտություն է շեշտը դնել ուսուցման՝ հասարակության կրթության վրա, նպաստել մարդկանց սոցիալիզացիային, քանզի այն քաղաքացիներին, ովքեր տիրապետում են օրենքներին և իրենց իրավունքներին, դժվար է ներքաշել կոռուպցիոն գործընթացի մեջ:

Հակակոռուպցիոն կրթության նպատակն է նպաստել կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության ձևավորմանը, արմատավորել արժեքներ և զարգացնել կարողություններ, որոնք անհրաժեշտ են սովորողների համապատասխան քաղաքացիական դիրքորոշման ձևավորման համար: Կարևոր է ձևավորել քաղաքացի, ով գիտակցում է հասարակական բարեկեցությանը և պետության անվտանգությանը սպառնացող կոռուպցիայի վտանգը, անհանդուրժող է կոռուպցիայի նկատմամբ և պայքարում է դրա դեմ: Այս խնդիրը կարևորվում է մեր պետության կողմից և կոռուպցիայի հիմնախնդրի վերաբերյալ ուսումնական նյութ է ընդգրկված նաև հանրակրթական դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչներում և ծրագրում:

ԻՆՉ Է ԿՈՌՈՒՊՑԻԱՆ

Կոռուպցիան (corruptio) լատիներեն բառ է, որը նշանակում է այլասերում, քայքայում, կաշառում, փչացում՝ բարքերի, սովորույթների վատացում, մարդկային լավագույն հատկանիշների արժեզրկում: Ի սկզբանե այն վերաբերում էր մարդու վարքագծի կանոններին՝ այս իմաստով այն քննարկել են Սոկրատեսը, Պլատոնը և ուրիշներ:

Աստիճանաբար հասկացության բովանդակությունը ավելի ընդարձակվեց և կոնկրետացվեց: Կոռուպցիան, իրոք, ունի պատճառների և հետևանքների լայն շրջանակ, ուստի և պահանջում է բազմակողմանի մոտեցում: Ըստ Օքսֆորդի ընդարձակ բառարանի՝ կոռուպցիա նշանակում է «պետական պարտականությունների կատարման ժամանակ կաշառքի և հովանավորչության միջոցով անբողջականության ազնվության խեղաթյուրում և քայքայում»:

«Թրանսփարեսի ինթերնեշնլ» միջազգային ոչ կառավարական կազմակերպության կողմից այն սահմանվում է այսպես. «Կոռուպցիան վստահված իշխանության չարաշահումն է՝ անձնական շահ ստանալու նպատակով»: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրում կոռուպցիան սահմանվում է այսպես» անձնական կամ այլ շահադիտական նպատակով տարբեր ձևերով արտահայտված ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահում»:

«Թրանսփարեսի ինթերնեշնլ»-ը նաև տարբերակում է կոռուպցիան «Ըստ կանոնների» և «Ընդդեմ կանոնների»: Առաջին դեպքում կաշառք է տրվում առավել բարեհաճ վերաբերմունքի արժանանալու նպատակով՝ մի բանի համար, որ կաշառք ստացողը պարտավոր է կատարել օրենքով սահմանված կարգով: Երկրորդ դեպքում կաշառքը տրվում է այնպիսի ծառայության համար, որը կաշառք ստացողը իրավունք չունի տրամադրելու:

Կոռուպցիան սոցիալական երևույթ է, դրա ցայտուն դրսևորումն այն է, երբ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման գործառույթներով օժտված պաշտոնյաներն իրենց պաշտոնական դիրքը և հնարավորություններն օգտագործում են շահադիտական նպատակներով՝ առաջնորդվելով անձնական կամ խմբային շահերով: Կոռուպցիան հանցագործություն է, որով պաշտոնատար անձն ի պաշտոնե ստացաց իրավունքներն օգտագործում է անձնական հարստացման նպատակով, դա

հասարակական իշխանության չարաշահումն է, որը վնասում է անհատի, հասարակության, պետության շահերին: Կոռուպցիան հատուկ է բոլոր հասարակարգերին:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎՆԱՍՆԵՐԸ

Կոռուպցիան համալիր՝ սոցիալական, քաղաքական, տնտեսական, իրավական, բարոյական հիմնախնդիր է, ուստի կոռուպցիան քառակի՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրին հասցվող վնասներ է պատճառում:

- Քաղաքական առումով կոռուպցիան հսկայական խոչընդոտ է հարուցում ժողովրդվարությանն ու օրինականությանը: Ժողովրդավարական համակարգում հաստատություններն ու ինստիտուտները լեգիտիմ չեն, եթե դրանցում իրականացվում է չարաշահում հանուն մասնավոր շահի:
- Տնտեսական առումով կոռուպցիան տանում է դեպի ազգային հարստության նվազեցման՝ խոչընդոտելով արդար շուկայական հարաբերություններին ու մրցակցությանը, հետևաբար և ներդրումներին:
- Կոռուպցիան առավել վնասակար ազդեցություն է գործում հասարակության սոցիալական կառուցվածքի վրա՝ չարաշահելով քաղաքական համակարգի, դրա ինստիտուտների և ղեկավարության նկատմամբ ժողովրդի վստահությունը: Հիասթափված հասարակության համար հուսախաբությունն ու ընդհանուր անտարբերությունը հանգեցնում են թույլ քաղաքացիական հասարակության, որն էլ իր հերթին ճանապարհ է հարթում բռնակալների, ինչպես նաև ժողովրդավարական ճանապարհով ընտրված, սակայն անբարեխիղճ առաջնորդների համար, որոնք ազգային ունեցվածքը վեր են ածում անձնական հարստության: Կաշառք պահանջելն ու վճարելը դառնում է նորմ: Ենթարկվել չցանկացողները հաճախ արտագաղթում են, դրանով իսկ երկիրը զրկելով իսկական ազնվագույն քաղաքացիներից:
- Կոռումպացված համակարգերի հետևանքներից է նաև շրջակա միջավայրի քայքայումը: Շրջակա միջավայրի վերաբերյալ կանոնների և օրենսդրության բացակայությունը կամ դրանց չկիրառելը հանգեցնում է աղտոտվածության, բնական ռեսուրսների գերշահագործման և այլ վնասների՝ ավիրելով շրջակա միջավայրը:

Կոռուպցիայի պատճառած վնասները չափելն անհնար է: Որոշ փորձագետներ այնուամենայնիվ կատարում են վերլուծություն՝ վիճակագրական կանխատեսման և այլ փորձարարական մեթոդների կիրառմամբ՝ կոռուպցիան դոլարային արժեքով չափելու նպատակով: Փաստացիորեն այն թերևս անհնար է, քանի որ կաշառք տալը հրապարակավ չի գրանցվում: Հայտնի չէ, թե տարեկան որքան գումար է վճարվում կոռումպացված պաշտոնյային: Իսկ կաշառքները միայն փողի ձևով չէ, որ տրվում են, նույնքան տարածված են նաև փոխադարձ լավությունը և ծառայությունը, նվերները և այլն: Կարելի է առավելագույնս ուսումնասիրել կոռուպցիայի մակարդակի և ասենք ժողովրդավարացման, տնտեսական զարգացման և շրջակա միջավայրին հասցված վնասի միջև հարաբերակցությունը: Կոռուպցիայի պատճառած սոցիալական վնասներն ավելի քիչ չափով են հաշվարկելի: Դոլարային արժեքով հաշվարկված ոչ մի սոցիալական վնաս չի կարող համարժեք լինել պաշտոնաթողության, անգրագիտության կամ անբավարար բուժօգնության հետեվում թաքնված մարդկային ողբերգությունը չափելու համար:

Վերջին երկու տարիներին ՀՀ-ում տեղի ունեցած իրադարձությունները ցույց տվեցին, որ կոռուպցիան իր անդառնալի հետևանքներն է թողել և ահռելի վնասներ հասցրել պետության պաշտպանության ոլորտում: Բանակում տեղի ունեցող կոռուպցիոն երևույթներն ու գործարքները հանգեցրել են.

- ✓ Սպայական կազմի հեղինակազրկման
- ✓ Բանակաշինության խաթարման
- ✓ Զենք-զինամթերքի ձեռք բերման և ոչ ճիշտ օգտագործման
- ✓ Մարտունակության նվազման
- ✓ Դավաճանության
- ✓ Մարդկային ճակատագրերի խեղաթյուրման

Այստեղ վնասները անչափելի են բոլոր առումներով, քանի որ տեսանք, թե որը եղավ դրա գինը:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Կոռուպցիայի հիմնական պատճառը մարդկային եսասիրությունն է և ագահությունը, և մենք չենք կարող կոռուպցիան համարել վարքագծի բացառիկ կամ հիվան-

դագին ձև, քանի որ մեզանից յուրաքանչյուրն էլ հակված է հոգալու իր մասին: Կոռումպացված վարքագծի գայթակղությունը մեծանում է սպառողական պահանջների աճի հետ, երբ սեփական բարեկեցության ձգտումն ավելի է կարևորվում քան հասարակության բարեկեցությունը, որը գրեթե մոռացության է մատնվում: Դրա հետևանքով քաղաքական գործիչներն ու քաղաքացիական ծառայողները անձնական բարեկեցության համար սկսում են չարաշահել սեփական պաշտոնը:

Կոռուպցիայի մակարդակը կարող է կապված լինել որոշակի հասարակության մշակույթի, մտածելակերպի և ավանդույթների հետ: Օրինակ՝ կոռուպցիան որպես չարիք ավելի հեշտությամբ է ընկալվում այն հասարակությունների կողմից, որոնցում հստակ տարանջատում կա հանրային և անձնական արժեքների միջև: Այն հասարակություններում, որտեղ կոռուպցիան մեծ տարածում ունի, շատ ավելի դժվար է փոխել կյանքի ու մտածեղության սովորույթները: Կոռուպցիան ավելի հեշտությամբ է արմատավորվում կրթության և հասարակական գիտակցության ցածր մակարդակ ունեցող երկրներում: Կան կոռուպցիային նպաստող մի շարք գործոններ՝ թույլ տնտեսություն, գործազրկություն, պետական բյուջեի ոչ ճիշտ տնօրինում, հզոր պետությունների ու կորպորացիաների միջամտություն, գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների տարանջատման ոչ լիարժեքություն, ՁԼՄ-ների պասիվ կամ ընտրողական մասնակցությունը հասարակական կամ քաղաքական կյանքին, նրանց կողմից այս կամ այն քաղաքական ուժին հարելը, պետական կառավարման գործառույթների պատշաճ վերահսկողության թուլություն և այլն:

Կոռուպցիայի ծավալների վրա ազդող մեկ այլ գործոն է իրավական համակարգի անկատարությունը: Կոռուպցիային նպաստում են ոչ հստակ հակասական և անընդհատ փոփոխվող օրենսդրությունը, ցածր որակավորում ունեցող դատարանները, վկաների պաշտպանության ծրագրերի բացակայությունը և այդ ամենի հետ ուղղակիորեն առնչվող՝ անվստահությունը իրավապահ մարմինների նկատմամբ: Կոռուպցիան բացասաբար է ազդում ցանկացած երկրի տնտեսական և սոցիալական զարգացման վրա:

Կոռուպցիան տնտեսության վրա ունենում է այսպիսի հետևանքներ.

- Խոչընդոտում է պետության մակրոտնտեսական քաղաքականության իրականացումը:

- Հնարավորություն է տալիս հարկերից խուսափել առավել ունևորներին՝ հիմնական բեռը գցելով ավելի աղքատ քաղաքացիների վրա:
- Նվազում է հարկերի մուտքը պետբյուջե և աճում ստվերային տնտեսությունը:
- Բերում է բյուջետային հատկացումների սահմանափակման, որի արդյունքում քաղաքացիական ծառայողները ցածր աշխատավարձ են ստանում, որն էլ իր հերթին խորացնում է հետագա կոռուպցիոն ռիսկերն ու գործողությունները:
- Նվազում է արտասահմանյան ներդրողների վստահությունը պետության նկատմամբ և նրանց ներդրումը երկրի տնտեսության մեջ:
- Հարկերի կորուստ, երբ հարկային մարմինները յուրացնում են հարկերի մի մասը:
- Արտադրական ներդրումների քչացում, տնտեսական աճի դանդաղեցում:
- Զարգացող երկրներին տրամադրվող միջազգային օգնության ոչ նպատակային օգտագործում, որը կտրուկ նվազեցնում է դրա արդյունավետությունը:
- Խանգարում է առողջ մրցակցությանը, որից մեծապես տուժում են փոքր ձեռնարկությունները:

Կոռուպցիայի ազդեցությունը պետական կառավարման վրա ունենում է այսպիսի դրսևորումներ.

- Նվազում են պետներդրումները և պետական պատվերով կատարվող աշխատանքների արդյունավետությունը:
- Կոռուպցիան խեղաթյուրում է պետական որոշումների իրական դրդապատճառները: Կոռումպացված քաղաքական գործիչները և ծառայողները հակված են պետական ռեսուրսներն ուղղելու գործունեության այնպիսի ոլորտների վրա, որտեղ հնարավոր չէ իրականացնել խիստ վերահսկողություն և մեծ են կաշառք կորզելու հնարավորությունները:
- Կոռումպացված կառավարությունը թույլ է և իր գործողություններում կաշկանդված, որի արդյունքում նվազում է պետության քաղաքական կայունությունը:
- Առկա է պետական ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխում ու ծախսում:
- Պետական ապարատի գործունեության արդյունավետության կորուստ:
- Հանգեցնում է հասարակական սպասարկման և հանրային ծառայությունների որակի իջեցման:
- Ստվերում է մնում ազգային-պետական մտածողությունը՝ իր տեղը զիջելով նեղ անձնական շահերին:

Ինչ վերաբերում է կոռուպցիայի սոցիալական-քաղաքական բացասական հետևանքներին, ապա այն՝

- Խարխլում է հասարակության գիտակցությունը, առաջացնում է դժգոհություն, աճում է սոցիալական լարվածությունը:
- Սպառնում է ժողովրդավարությանը, օրենքներին:
- Թուլացնում է իշխանության նկատմամբ հավատը:
- Իջեցնում է մարդկանց բարոյական գիտակցության մակարդակը:
- Նվազում է քաղաքացիների մասնակցությունը հասարակական գործունեությանը:
- Հանգեցնում է կազմակերպված հանցագործությունների աճին:

Այսպիսով՝ կոռուպցիայի հետևանքով ազգային-պետական ռազմավարական մտածողությունն իչ տեղը զիջում է չինովնիկական եսասիրությանը: Չինովնիկները մի կողմ թողնելով ազգային պետական գործունեությունը, կենտրոնանում են կոռուպցիոն գործունեության վրա, ինչը հանգեցնում է ազգի և պետության առջև ծառացած խնդիրների անարդյունավետ լուծումների: Կոռուպցիայի հետևանքով աճում է բյուրոկրատիզմը, քաշքշուկը պետական ապարատում, ընկնում է հանրային ծառայությունների որակը: Հետևաբար կոռուպցիան քայքայիչ ազդեցություն է թողնում հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա՝ խեղաթյուրելով, ապակայունացնելով դրանք, վտանգելով քաղաքացիական հասարակության կայացումը:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Կոռուպցիայի դրսևորումներ են այն գործողությունները, որոնք արդարության խախտումով «վաճառում են» պետական, քաղաքական որոշումները: Կան կոռուպցիայի բազմաթիվ դրսևորումներ ինչպես նաև տարբեր երկրներում որպես կոռուպցիա տարբեր հանցագործություններ են որակվում:

Հաճախ հանդիպող կոռուպցիոն դրսևորումների մեկնաբանություններ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի (ընդունված 2021թ և ուժի մեջ մտած 2022թ)՝ **Կաշառք ստանալը (հոդված 435)-** Կաշառք ստանալը՝ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ այլ իրավունք, ծառայություն

կամ որևէ այլ առավելություն ստանալը, պահանջելը, կաշառք տալու առաջարկ ներկայացնելը կամ կաշառք տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը՝ իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին գործողություն կատարելու կամ չկատարելու համար:

Կաշառք տալը (հոդված 436)- Կաշառք տալը՝ պաշտոնատար անձի կամ նրա մատնանշած անձին անձամբ կամ միջնորդի միջոցով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ այլ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն խոստանալը առաջարկելը կամ տրամադրելը՝ պաշտոնատար անձի իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին գործողություն կատարելու կամ չկատարելու համար:

Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը (հոդված 441)- Պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ այնպիսի արարք կատարելը, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

Ապօրինի հարստանալը (հոդված 443)-

1. Ապօրինի հարստանալը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը և (կամ) ծախսը որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցանքի հատկանիշները բացակայում են:

Ստորև ներկայացնեմ կոռուպցիոն հանցագործությունների ցանկը ըստ ՀՀ քրեական օրենսգրքի (ընդունված 2021թ մայիսին և ուժի մեջ մտած 2022թ հուլիսին, հավելված համար 1)՝

ՑԱՆԿ

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 218. **Ընտրակաշառք ստանալը**

Հոդված 219. **Ընտրակաշառք տալը**

Հոդված 220. **Ընտրակաշառքի միջնորդությունը**

Հոդված 221. **Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը**

Հոդված 231. **Կուսակցության օգտին խոշոր չափերով ապօրինի նվիրատվություն ներգրավելը**

Հոդված 232. **Կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը խոշոր չափերով շրջանցելը**

Հոդված 255. **2-րդ մաս, 2-րդ կետ. Խարդախությունը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 256. **2-րդ մաս, 2-րդ կետ. Վստահված գույքը հափշտակելը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 258. **2-րդ մաս, 9-րդ կետ. Շորթումը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 268. **3-րդ մաս, 2-րդ կետ. Ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 269. **3-րդ մաս, 3-րդ կետ. Արժեթղթերի շուկայում գնային չարաշահումը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված

ազդեցությունն օգտագործելով

Հոդված 272. Մասնավոր ոլորտում կաշառք ստանալը

Հոդված 273. Մասնավոր ոլորտում կաշառք տալը

Հոդված 274. Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկի, մրցավարի, թիմի ղեկավարի, մարզչի, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչի, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցի կամ դրա կազմակերպչի կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամի կողմից կաշառք ստանալը

Հոդված 275. Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկին, մրցավարին, թիմի ղեկավարին, մարզչին, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչին, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցին կամ դրա կազմակերպչին կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամին կաշառք տալը

Հոդված 276. Ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն ստանալը կամ պահանջելը

Հոդված 277. Մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը

Հոդված 282. 2-րդ մաս, 1-ին կետ. Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով.

3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 284. 2-րդ մաս, 2-րդ կետ. Հակամրցակցային գործունեությունը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 296. Փողերի լվացումը

Հոդված 435. Կաշառք ստանալը

Հոդված 436. Կաշառք տալը

Հոդված 437. Կաշառքի միջնորդությունը

Հոդված 438. Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելը

Հոդված 439. Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալը

Հոդված 440. Կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ

ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը

Հոդված 441. Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը

Հոդված 442. Պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը

Հոդված 443. Ապօրինի հարստանալը

Հոդված 444. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը

Հոդված 445. Պաշտոնեական կեղծիքը

Հոդված 477. Կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիան

Հոդված 480. Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը

Հոդված 481. Քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը

Հոդված 482. Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը

Հոդված 486. 2-րդ մաս, 2-րդ կետ. Արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 496. Դատավարության մասնակիցներին՝ իրենց լիազորությունների հետ կապված կաշառք տալը

Հոդված 497. Դատավարության մասնակիցների կողմից իրենց լիազորությունների հետ կապված կաշառք ստանալը

Հոդված 549. Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը

Հանրապետության նախագահ Ա. Սարգսյան

2021 թ. մայիսի 27
Երևան
ՀՕ-199-Ն

Պաշտոնական հրապարակման օրը՝ 27 մայիսի 2021 թվական:

Ողջ աշխարհում կոռուպցիան մարդկանց կյանքի վրա ազդում է բազմապիսի եղանակներով: Վատագույն դեպքում կոռուպցիան սպառնում է մարդկանց կյանքին: Բազմաթիվ այլ դեպքերում այն վտանգում է մարդկանց ազատությունը, առուղջությունը կամ ունեցվածքը: Ցանկացած պարագայում խոշոր կամ մանր կոռուպցիան կյանքն ավելի է բարդացնում և վտանգում:

Կոռուպցիան որպես սոցիալական և իրավական երևույթ, դիտարկվում է երկու մակարդակներում՝ ստորին (վարչական) և վերին (էլիտար): Չնայած նրանց տարբերություններին՝նրանք կապված են և մեկը մյուսին լրացնում են : Ներքևների կոռուպցիան ընկած է մարդկանց ամենօրյա պահանջմունքների բավարարման հիմքում, այն բնորոշ է ստորին և միջին օղակների պաշտոնատար անձանց, որոնք ամենօրյա շփումների մեջ են գտնվում քաղաքացիների հետ:

Մեծ վտանգ է ներկայացնում էլիտար կոռուպցիան: Սա հանուն անձնական շահի բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից պետական որոշումներ կայացնելիս իրենց վստահված իշխանության չարաշահումն է: Էլիտար կոռուպցիան աչքի է ընկնում իրականացնող սուբյեկտների բարձր սոցիալական կարգավիճակով, հսկայական բարոյական և նյութական վնասով, իրադարձությունների քողարկվածությամբ և իշխանությունների հովանավորչությամբ: Այս ամենն արվում է ծայրահեղ գաղտնիության պայմաններում, որտեղ պայքարի պրոֆեսիոնալների մուտքն արգելված է, իսկ ոչ պրոֆեսիոնալը չի կարող երևույթը հայտնաբերել: Էլիտար կոռուպցիան շատ ճկուն է: Եթե ներքևների կոռուպցիան ազդում է ժողովրդի նյութական վիճակի վրա, ապա էլիտար կոռուպցիան խլում է հսկայածավալ պետական և տնտեսական միջոցներ: Կոռումպացված էլիտան խելացի է, կրթված, հարուստ և իշխող: Նրա հիմնական խնդիրը թաքնված մնալն է: Դրա համար էլ էլիտար կոռուպցիային ավելի դժվար է բնորոշում տալ, քան ներքևների կոռուպցիային: Եվ եթե նույնիսկ էլիտար կոռուպցիայում կատարվում են մերկացման դեպքեր, ապա՝ միայն ինչ-որ մեկից ազատվելու համար:

Կոռուպցիոն երևույթների հետ մենք առնչվում ենք հասարակական կյանքի տարբեր՝ տնտեսական (հարկային, մաքսային, գյուղատնտեսության, բնապահպանության, կրթության, առողջապահության և այլն) սոցիալական, քաղաքական և մշակութային ոլորտներում:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Վերջին տարիներին աշխարհի շատ պետություններ, միջազգային մարմիններ և ոչ կառավարական կազմակերպություններ լուրջ պայքար են մղում կոռուպցիայի դեմ: Կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ-ում մեկնարկեց 2000-ականներից սկսած: 2003թ. ՀՀ կառավարության կողմից մշակված և ընդունված հակակոռուպցիոն ռազմավարությամբ ընդունվեցին բազմաթիվ օրենսդրական փաստաթղթեր, երկիրը անդամակցեց հակակոռուպցիոն պայքարի միջազգային հեղինակավոր կազմակերպություններին՝ (ԵՄ, ԳՐԵԿՈ, ՏՋՀԿ, անցումային տնտեսության երկրների հակակոռուպցիոն պայքարի ցանց և այլն) ինչպես նաև ընդունվեցին և վավերացվեցին կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ՝ ԵԽ կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքացիական և քրեական իրավունքների կոնվենցիաներ, ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիա և այլն:

Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կոնվենցիաների ընդունումը ինչպես նաև հակակոռուպցիոն միջազգային նախաձեռնություններին անդամակցությունը կարևորագույն նախադրյալներ ձևավորեցին Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների հետագա նախագծման և իրականացման համար:

Չնայած նախորդ տասնամյակներում կառավարության կողմից իրականացված երեք հակակոռուպցիոն ռազմավարություններին (2000-2003թթ., 2009-2012թթ., 2015-2018թթ.) և արձանագրված արդյունքներին, այդուհանդերձ, հակակոռուպցիոն ռազմավարություններով նախանշված նպատակադրումները չեն իրականացվել՝ պայմանավորված քաղաքական կամքի և հակակոռուպցիոն քաղաքականության իրական խնդիրների հայտնաբերման, թիրախավորման և դրանց համակարգային ու հիմնարար լուծմանն առնչվող կոնկրետ գործնական քայլերի բացակայությամբ: Եվ միայն 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած ժողովրդական հեղափոխության հաղթանակի արդյունքում ձևավորված իշխանությունը ստանձնեց կոռուպցիայի դեմ պայքարը որպես գերակա ուղղություն հռչակելու ձևակերպված կամք և վճռականություն: Հակակոռուպցիոն բարեփոխումների 4-րդ ռազմավարության և միջոցառումների 2019-2022թթ. ծրագիրը ՀՀ կառավարությունը հաստատեց 2019թ. հոկտեմբերի 3-ին, որով ամրագրեց հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական բարեփոխումների առաջնահերթությունները՝ հակակոռուպցիոն ինստիտուցիո-

նալ համակարգի վերափոխումը և զարգացումը, վարչական կոռուպցիայի հաղթահարումը, հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը, բիզնեսի և քաղաքականության տարանջատման հստակ սահմանների ապահովումը, կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրացման երաշխավորումը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի սահմանումը և ներդրումը, հանրային կրթության և իրազեկման միջոցով կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունքի սերմանումը:

Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը

Հակակոռուպցիոն 4-րդ ռազմավարությունը հստակ որդեգրեց հակակոռուպցիոն պայքարի իրականացման ինստիտուցիոնալ մարմինների ձևավորման քաղաքականությունը: Որպես հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման ինստիտուցիոնալ մոդել՝ ընտրվեց ապակենտրոնացված, խիստ մասնագիտացված կառույցների ստեղծումը: ՀՀ վարչապետի որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարությանը վերապահվեց հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիտորինգի իրականացման գործառույթը. Նախարարության աշխատակազմում ձևավորվեց համապատասխան անվանումով վարչություն: Վերակազմավորվեց նաև ՀՀ վարչապետին կից հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, որի քարտուղարության աշխատանքները վերապահվեց ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիտորինգի վարչությանը: 2017թ. ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ձևավորվեց 2019թ.: 2020թ. դրությամբ վերջինիս վերապահվել է կոռուպցիայի կանխարգելմանը և հակակոռուպցիոն ապահովմանն ուղղված 13 գործառույթ:

Հակակոռուպցիոն կոմիտե

2021թ. մարտի 24-ին ՀՀ ազգային ժողովի ընդունած «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով ստեղծվել է հակակոռուպցիոն մասնագիտացված մարմին՝ «Հակակոռուպցիոն կոմիտե» անվանմամբ: Վերջինս քննչական մարմին է, որը կազմակերպում և իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչ դատական քրեական վարույթը: Հակակոռուպցիոն կոմիտեն իր լիազորությունների

շրջանակում և օրենքով սահմանված կարգով իրականացնում է օպերատիվ հետախուզական գործունեություն:

Հակակոռուպցիոն դատարաններ

Կոռուպցիայի դեմ պայքարում ինստիտուցյոնալ համակարգի կայացման և շարունակական զարգացման տեսանկյունից հակակոռուպցիոն 4-րդ ռազմավարությամբ ստեղծվել է նաև հակակոռուպցիոն մասնագիտացված դատարան: Դա կհանգեցնի դատավորների կողմից գործերի առավել որակյալ, բազմակողմանի և արդյունավետ լուծմանը:

2021թ. ապրիլի 14-ին ՀՀ ԱԺ-ն ընդունեց «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը, որի համաձայն ստեղծվեց հակակոռուպցիոն դատարանը: Նշված օրենքի 24-րդ հոդվածով սահմանված են մասնագիտացված դատարանների իրավասությունները: Հակակոռուպցիոն դատարանը գործում է առնվազն 15 դատավորի թվակազմով, որից առնվազն 10-ը պետք է լինեն կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ իսկ առնվազն 5-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորներ:

Նշենք, որ նաև սահմանափակումներ կան դատավոր նշանակելու համար, որն էլ սահմանված է օրենսգրքի 112-րդ հոդվածով: Կոռուպցիայի դեմ պայքարում հակակոռուպցիոն 4-րդ ռազմավարությամբ սահմանված են երեք հիմնական ուղղություններ.

1. Կոռուպցիայի կանխարգելումը,
2. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը,
3. Հակակոռուպցիոն կրթությունը և իրազեկումը:

Կոռուպցիայի կանխարգելումը

Կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ քայլերը միտված են վարչական կոռուպցիայի հախթահարմանը, հանրային կառավարման համակարգում բարեվարքության ամրապնդմանը, հայտարարագրման համակարգի կատարելագործմանը, հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման և մասնավոր հատվածում թափանցիկության բարձրացմանը:

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում

Հանցագործությունների բացահայտման արդյունավետության տեսանկյունից կարևորվում է՝ կոռուպցիոն հանցագործությունների տեսակների հստակեցումը և դրանց շրջանակի օրենքով սահմանումը, մասնավոր հատվածում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելը, կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետության ապահովումը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագաձմանն ուղղված գործուն կառուցակարգերի սահմանումը:

Հասարակության հակակոռուպցիոն կրթությունը և իրազեկումը

Այստեղ կարևորվում է կոռուպցիայի դեմ պայքարի կրթալուսավորչական քաղաքականության իրականացումը: Բնակչության կրթումը և հանրային ծառայողների մասնագիտական վերապատրաստումները, կոռուպցիա երևույթի և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմաների ընդգրկումը կրթության պետական ծրագրերում, պետական ծառայողների վերապատրաստման դասընթացներում կոռուպցիայի դեմ պայքարի լուսաբանման և բնակչության ընկալման վրա ազդելու կարևոր գործիքեր են: Հակակոռուպցիոն ռազմավարությամբ կարևորվում է հակակոռուպցիոն կրթության արմատավորումը հանրակրթական դպրոցում: Նախատեսվում է արդիականացնել «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում դասավանդվող կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող թեմաների բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խորությամբ ուսումնասիրելով «Կոռուպցիան» որպես գլոբալ հիմնախնդիր՝ պարզեցինք, թե կոռուպցիան ինչպիսի բացասական երևույթ է առանձին անհատների և հասարակության համար: Պարզեցինք, որ կոռուպցիան նպաստում է աղքատության առաջացմանը, ոտնահարում մարդու իրավունքները և, ընդհանրապես, հիվանդություն է հասարակության համար, որը քայքայում, փչացնում է տվյալ հասարակության բարոյական և արժեքային համակարգը: Սակայն պետք է նշել, որ կոռուպցիայի զոհ կարող են լինել ոչ միայն առանձին անհատներ, խմբեր, այլ նաև պետությունը, վերջինս ոչ միայն թուլացնում է պետությունը, այլև ուղղակիորեն շարունակաբար հարվածում է նրան՝ կասեցնելով վերջինիս տնտեսական, քաղաքական և հոգևոր աճը:

Առաջին հայացքից թվում է, թե կոռուպցիան մեծ մասամբ զարգացող երկրներին բնորոշ հիմնախնդիր է: Այնուամենայնիվ, այն որքան զարգացող, նույքան էլ զարգացած երկրների հետ է առնչվում: Դրա վկայությունն են Գերմանիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում կամ Մեծ Բրիտանիայում վերջերս տողի ունեցած կոռուպցիոն սկանդալները:

Կոռուպցիայի տարածվածության աստիճանը պայմանավորված է հիմնավոր ստուգումների ու վերահսկողության կիրառմամբ: Մարդիկ այնքան կոռումպացված են, որքան նրանց թույլ է տալիս համակարգը: Հարցին՝ համատեղելի են արդյոք ժողովրդավարությունն ու կոռուպցիան, կարելի է պատասխանել այսպես՝ ինչպես որ իրական ժողովրդավարությունն է վտանգավոր կոռուպցիայի համար, այնպես էլ կոռուպցիան՝ իրական ժողովրդավարության համար: Կոռուպցիան ըստ էության հակասական է և ժողովրդավարության հետ անհամատեղելի: Դժբախտաբար դա չի նշանակում, թե ժողովրդավարական երկրներում կոռուպցիա չկա: Գայթակղությունը ամենուր մնում է որպես մարտահրավեր: Առավել կարևոր է վերահսկողության մեխանիզմներ կիրառել՝ մարդկանց արգելելով չարաշահել իրենց իշխանությունը:

Կոռուպցիան տարածված է այնտեղ, որտեղ գայթակղությունն ուղղեկցվում է ամենաթողությամբ: Կոռուպցիոն դրսևորումները լայնատարած են այնտեղ, ուր բացակայում է իշխանության վերահսկողությունը, ուր որոշումները գաղտնի են կայացվում, ուր քաղաքացիական հասարակությունը ամուր հիմքեր չունի, ուր մարդիկ

դատապարտված են աղքատության՝ ունեցվածքի խիստ անհավասար բաշխման պատճառով: Այնուամենայնիվ, կոռուպցիան առկա է անգամ այնտեղ, ուր քաղաքական, տնտեսական, իրավական և սոցիալական ինստիտուտները պաշտպանված են: Ինչ վերաբերում է կոռուպցիայի դեմ պայքարին՝ այստեղ կարելի է առաջնորդվել «Անհնարին ոչինչ չկա» սկզբունքով:

Իմ կարծիքով կոռուպցիան հնարավոր է վերահսկել և հնարավորինս նվազագույնի հասցնել եթե կառավարությունը, գործարար շրջանակները և քաղաքացիական հասարակությունը դրսևորեն համընդհանուր կամք, միավորեն իրենց ջանքերն ու միջոցները՝ դրա դեմ պայքարում:

ՄԱԿ-ի հակակոռուպցիոն ծրագրում ընդգծված է մի կարևոր հանգամանք՝ կոռուպցիայի դեմ պայքարը անշուշտ առաջին հերթին իշխանության պարտավորությունն է, թեև միաժամանակ յուրաքանչյուր քաղաքացու պատասխանատվությունը՝ թույլ չտալ կոռուպցիա, չմասնակցել կոռուպցիոն գործարքներին, իսկ նմանի մասին տեղեկանալու դեպքում անհապաղ ծանուցել համապատասխան մարմիններին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. «Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի» մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար՝ Երևան-2010
2. Հասարակագիտություն՝ 8-րդ դասարան, «Զանգակ» հրատարակչություն՝ Երևան-2018
3. «Կոռուպցիան և մարդու իրավունքները. Կապի հաստատումը», «Անտարես» հրատարակչություն՝ Երևան-2009
4. ՀՀ քրեական Օրենսգիրք (ընդունված 2021թ. և ուժի մեջ մտած 2022թ.)
5. https://reforms.am/
6. https://iravaban.net/
7. https://iravaban.net/